ԵՐԵՍՆԱՄՅԱ ՎԱՍՏԱԿԻ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մարդու ինքնահաստատման լավագույն ձևն է աշխատանքը: Իսկ եթե մարդը աշխատել է բարեխղճորեն և ինքնանվիրումով, ուրեմն իզուր չի ապրել, այլ սպառվել է լույս տալով:

Այս արժևորումով էր ահա, որ նոյեմբերի 9-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ջերմորեն գնահատեց Մայր Աթոռի 6 գործակիցների երեսնամյա վաստակը:

Նոյեմբերի 9-ին Մայր տաճարը լեցուն էր հավատացյալներով: Իր քահանայական գործունեության երեսնամյակին ս. պատարագ էր մատուցում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ Կոմիտաս աբեղա Հովնանյանը Սուրբ Սեղանից կարդաց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը (տես էջ 8), որով Վեհափառ Հայրապետը բարձր էր գնահատում լուսարարապետ սրբազանի անձնվեր ծառայությունը Հայ Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Պատարագիչ սրբազան հայրը սրտառուչ քարոզով իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ցուցաբերած վստահության և ջերմ գնահատանքի համար:

Հետ պատարագի Վեհարանի սեղանատանը կազմակերպված էր մեծարման ճաշկերույթ՝ ի գնահատություն Մայր Աթոռի պաշտոնյաների 30-ամյա վաստակի:

Ավագագույնը տիար Գառնիկ Քեհյայանն է, որ երեսուն տարի անխոնջ եռանդով վարում է Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժինը: Վեհափառ Հայրապետը նրան պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով: Օրհնության գրի մեջ Նորին Սրբությունը այսպես է բնութագրում տիար Գառնիկ Քեհյայանի վաստակը.

«Երեսուն տարիներ շարունակ Դուք անսակարկ կերպով գործեցիք Ձեզ հատուկ բարեխղճությամբ, ձեռնհասությամբ ու ավնլվությամբ, տևապես առաջնորդվելով բարոյական և աշխատանքային կարգապահության սկզբունքներով»:

Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ տիար Արծրուն Գալիկյանը նույնպես գործունեության երեսնամյա վաստակ ունի: Վեհափառ Հայրապետը նրան նույնպես արժանացրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի՝ իբրև գլխավոր ճարտարապետ և ընդհանուր ղեկավար Մայր Աթոռի բոլոր շինարարական ձեռնարկների:

«Վերջին երեսուն տարիներին Մայր Աթոռում և մեր ներքին թեմերում կատարված բոլոր շինարարական աշխատանքները, պատմական վանքերի ու եկեղեցիների վերանորոգումները տեղի ունեցան ուղղակի Ձեր վերին ղեկավարությամբ, բացառիկ ձեռնհասությամբ», գրում է Վեհափառ Հայրապետը իր օրհնության գրի մեջ:

Տիար Պարգև Շահբազյանին ուղղված օրհնության գրի մեջ Վեհափառ Հայրապետը ընդգծում է. «Երեսուն տարիներ անընդմեջ Դուք ծառայել եք Մայր Աթոռիս բացառիկ բարեխղճությամբ և ձեռնհասությամբ, իբրև հմուտ դասախոս հոգևոր ճեմարանի, իբրև վարիչ-քարտուղար միջեկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի և հայրապետական Մեր թարգմանի-

ջը ֆրանսերեն լեզվով»: Ասենք նաև, որ շատ արդյունավետ է եղել տիար Շահբազյանի գործունեությունը «Էջմիածին» ամսագրին, մանավանդ որ 1983—84 թվականներին ձեռնհասորեն իր բոլոր կբաղումներին կուգորդեց ամսագրի խմբագրի պաշտոնը և այժմ մաս է կազմում ամսագրի խմբագրական հանձնաժողովին:

Տիար Նուբար Միքայելյանի վաստակը գերազանցում է երեսուն տարին: Նա մեղվաջան աշխատանքով ծառայել է «Մայր Աթոռիս բացառիկ բարեխղճությամբ իբրև ժրաջան քարտուղար դիվանատան և իբրև հոգատար պահպանող և ուսումնասիրող Մայր Աթոռիս Ձեռագրատան», գրում է Նորին Սրբությունը:

Եվ, վերջապես, տիար Լևոն Խոջամիրյանի տարիների բարեխիղճ աշխատանքի արդյունքն է Մայր Աթոռիս փոխադրամիջոցների բարեկարգ վիճակը: «Երեսուն տարիներ անընդմեջ 'Դուք ծառայում եք Մայր Աթոռիս, մեծ բարեխղճությամբ իբրև հմուտ ղեկավարը Մայր Աթոռիս փոխադրական միջոցների, Ձեզ հատուկ հավատարմությամբ ու կարգապահությամբ»: Վեհափառ Հայրապետը այսպես է գնահատել տիար Խոջամիրյանի վաստակը իր օրհնության գրի մեջ:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը հոբելյարներին մաղթեց քաջառողջություն և երկար կյանք՝ շարունակելու իրենց եկեղեցանվեր և հայրենանվեր ծառայությունը Մայր Աթոռում:

ԹՂԹԱԿԻՑ